

ՆԱՅԱՍԱՆԻ ՆԱԽԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 8-ԻՆ, ԺԱՄԸ 15.40-ԻՆ ՍՈՒՏՔԱԳՐՎԱԾ՝ ՓԱՍՏԱԲԱՆ ՏԻԳՐԱՆ ԵԳՈՐՅԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվի առնելով, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա սահմանադրական դատարանի գործունեության կազմակերպման հետ կապված հարցերով սահմանադրական դատարանն ընդունում է աշխատակարգային որոշումներ, որոնք դիմումները քննության ընդունելու հարցերով վերջնական բնույթ ունեն,

ընդունելով ՀՀ սահմանադրական դատարանի նախագահի առաջարկությունը՝ հարցին լուծում տալ ոչ թե «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի հիմքով՝ դատարանի նախագահի միանձնյա վերջնական որոշմամբ, այլ՝ դատարանի աշխատակարգային նիստում,

ուսումնասիրելով ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից դիմումների վերադարձման առնչությամբ փաստաբան Տիգրան Եգորյանի՝ 2016 թվականի հունվարի 8-ին, ժամը 15.40-ին սահմանադրական դատարան մուտքագրված դիմում-բողոքները, սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Փաստաբան Տիգրան Եգորյանի կողմից ՀՀ Ազգային ժողովի թվով 19 պատգամավորների եւ առանձին հասարակական կազմակերպությունների ու քաղաքացիների անունից ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված դիմումների՝ ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից 2015 թվականի դեկտեմբերի 23-ին վերադարձնելն իրավաչափ է, իրականացվել է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին համապատասխան:

2. Ներկայացված դիմումները չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ եւ 6-րդ կետերի ու նույն հոդվածի 2-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 26 եւ 69-րդ հոդվածների, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 110.1-րդ հոդվածի պահանջներին եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով ենթակա են վերադարձման՝ որպէս սահմանադրական դատարան դիմելու իրավասություն չունեցող անձի/անձանց/ կողմից օրենքի պահանջների խախտմամբ ներկայացված դիմումներ:

Հայաստանի Հանրապետությունում գործող սահմանադրական եւ օրենսդրական իրավակարգավորումների համաձայն հանրաքվեների արդյունքների հետ կապված վեճերով ՀՀ սահմանադրական դատարանն իրավասու է գործ քննել ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների առնվազն մեկ հինգերորդի (27 պատգամավորի)՝ օրենքով սահմանված կարգով ներկայացրած դիմումի առկայության դեպքում, ինչը չի ապահովվել: Իսկ անհատական դիմում /այդ թվում՝ հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված/ ՀՀ սահմանադրական դատարանը կարող է քննության առնել բացառապէս գործը լուծող վերջնական դատական ակտով դիմողի նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականության հարցով /ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի առաջին մաս/:

ՀՀ Սահմանադրությունը եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքը գործի բնույթից ելնելով դիմումի ընդունման որեւէ բացառություն չեն նախատեսում եւ դիմող սուբյեկտների ընտրության հարցում սահմանադրական դատարանին որեւէ հայեցողությամբ չեն օժտում, ինչը, ի դեպ, համահունչ է նաեւ սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկային:

Ավելին, ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածով միանշանակ սահմանված է, որ սահմանադրական դատարանն իր լիազորություններն իրականացնում է օրենքով սահմանված կարգով, իսկ Սահմանադրության 101-րդ հոդվածն ըստ կոնկրետ լիազորությունների սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների ցանկը սահմանելու հետ մեկտեղ ամրագրել է, որ նրանք կարող են դիմել սահմանադրական

դատարան Սահմանադրությամբ եւ սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

11 հունվարի 2016 թվականի
ՄԴԱՌ-1